

ՀԱՍՏԻ

Rédaction du Journal Arménien "ARCHALOUYCE" Hotel d'Arménie S. Bulbulian (Egypte) LE CAIRE

Directeur EGHICHÉ TOROSSIAN

Ծանուցումները մասնաւոր պայմաններով կ'ընդունուին :

Զեկուհիները եւ յին օրուի :

ԱՐՁԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՒՏԱՐԹԻ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1914

ԿՆԻՊՏԱՍ

Տարեկան 40 ԵԳ. Ա. Ե.

Վեցամսայ 20

ԱՐՏԱՍԱՅՄԱՆ

Տարեկան 12 ԵՐ

Ապառիկ բաժանորդագրութիւն չի ընդունուիր :

ՊՊՊ 17

ՏՆՕՐԷՆ - ԽՄԱԿԻՐ ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍՅԱՆ

Արժանաց եղիպական Կառավարութեան

ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԳՍԵՉԱՊԻՏ Ս. ՊԵՆԷՊԻՆԵԱՆ

ՊՊՊ 17

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի ԲԱՐԵՆՈՐԴՈՒՄՆԵՐԸ

Պ. Պ. ՎԷՍՏՐՆԷՆԿ ԵՒ ՀՕՖ (Կենտրոնական)

Պ. ՎԷՍՏՐՆԷՆԿ Հօլանտացի է և մասնագէտ վարչական գործերու...

1892 ին, 20 Տարեկան հասակին մէջ արդէն աւարտած իր ուսումը...

Շնորհիւ իր ուղղամիտ և ուժեղ նկարագրին, շատ արագ յառաջդիմութիւններ ընելով...

1905 ին նշանակուած է ընդհանուր քննիչ Յօր-Բօքի շրջանին և 1908 ին այնտեղ պատահած ազդու տարբերութեան ընթացքին ցոյց տուած է այնպիսի կորով և շրջահայեցութիւն, որ գարձեալ արժանանալով աստիճանի բարձրացման և շքանշանի, նշանակուած է Ընդհ. Կառավարչի օգնական :

1910 ին կանչուելով Հոլանտա, պաշտօն ստանձնած է մասնակցելու Հոլանտական գաղութներու կազմակերպական ծրագիրը մշակելու կոչուած յանձնաժողովին :

Յետոյ դարձեալ անցած է գաղութները, և վերջին անգամ, անցեալ տարի, 1913 ին, վերստին գալով Եւրոպա, իր Կառավարութեան կողմէ ցոյց տրուած է իբրև թեկնածու Հայաստանի Ընդհանուր Քրն. նիւթեան պաշտօնին :

Պ. Լ. Ս. ՎԷՍՏՐՆԷՆԿ ամուսնացած է և ունի չորս զաւակներ. իրեն կ'ընկերանայ գէպի Թուրքիա նաև իր Տիկինը :

Պ. Նիգօլա Հօֆ՝ Նորվեկիացի է, ծնած Բրիտանիայի արուարձաններէն մէկուն մէջ 1867 ին, ուրեմն 47 տարեկան է, վեց տարու մեծ Պ. Լ. Ս. ՎԷՍՏՐՆԷՆԿէն :

Պ. Նիգօլա Հօֆ, Նիհար, խորհող,

սակաւախօս Հիւսիսի մարդու տիպն է. Պ. Հօֆ զինուորական է, շրջա. նաւարտ Բրիտանիայի Չինուորական բարձրագոյն վարժարանէն և հիմայ կը կրէ Դեր - Գնդապետի (Lieutenant Colonel) աստիճան :

Ունի նաև վարչական փորձառութիւն՝ շնորհիւ անոր որ երկար տարիներէ ի վեր կը վարէր Նորվեկիոյ պատերազմական նախարարութեան սպասարկութեանց պետութիւնը :

Փարիզի Նորվեկիական դեսպանը կը հաւատէ որ Նորվեկեան կառավարութիւնը դժկամակութեամբ բաժնուեցաւ իր այնքան սիրած արժանաւոր պաշտօնեայէն և եթէ յօժարեցաւ այս կարգադրութեան, միայն այն նկատուածով էր որ առաջարկուած գործը նիւթական է աւելի բարոյական հրապոյր մը կը ներկայացնէ :


Նորվեկիոյ Կառավարութիւնը, կ'ըսէ Փարիզի Դեսպանը, չուզեց մերժել որ Նորվեկիացի մը բարութիւն և անդորրութիւն տանի հայաստանի ժողովուրդներուն :

Պ. Հօֆ՝ կը պատկանի Նորվեկիոյ ամենահին ազնուական ընտանիքներէն մէկուն և ամուրի է :

Առհասարակ երկու Ընդհանուր քննիչներու մասին ստացուած տեղեկութիւններուն մէջ ամէնէն աւելի շեշտուած կէտն այն է թէ՛ երկուքն ալ պարկեշտութեան և ուղղամտութեան տիպարներ են, և այդ, ամենէն ուրախալի պարագան պէտք է նկատել, որովհետև, դժբաղդաբար Եւրոպայի մէջ ալ այդ յատկութիւնները ամենէն հազուադիւրսներն են (Ազգասմարտ)

ՊԱՏՄԱԿԱՆ ՈՍԿԵՏԱԽՏԱԿԸ

Հ. Բ. Ը. Միութեան Ութերորդ տարեգարձի տարեկան հանգեսին առթիւ, որ Հէլիոօլիսի մէջ տեղի ունեցաւ Մայիս 10 ի Կիրակի օրը, Գահիրէի Հայ ոսկերիչները՝ իրենց ազգային երախտագիտական զգացումները արտայայտեցին զրականօրէն, արուեստագիտական գեղեցիկ նուէրով մը՝ ընծայուած առ



Ն. Վ. ՊՕՂՈՍ ՓԱՇԱԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՈՍԿԻԷ ՓԼԱՔԸ

Ի ՆՇԱՆ ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԳԱԶԻՐԷԻ ՀԱՅ ՈՍԿԵՐԻՉՆԵՐԷՆ 10 ՄԱՅԻՍ 1914

Վսեմ. Պօղոս փաշա Նուպար, իր ի նպաստ հայ դատին մատուցած այն անխնայ ծառայութեան համար՝ զոր ըրաւ Եւրոպական Դահլիճներու մօտ ինքնայատուկ ամբողջ կորովով և խզմտութեամբ :

Ոսկետախտակը, որ կը պարունակէ Բլաքիթէ Էֆիուիսի մը վրայ հիանալիօրէն բարձրաբանդակուած Մայր Հայաստանի Խորհրդանշանը և յարակից բոլոր արուեստագիտական մասերը, ճաշակի և ըմբռնողութեան տեսակէտով, գերազանցապէս արուեստը կը մարմնացնէ, և որուն յղացմանը համար կրնան հրպարտ ըլլալ մեր հայ ոսկերիչները (*) իբրև ժամանակին և մարդուն յարմարագոյն մէկ նուէրը որ կրնային ընել, նկատի ունենալով Փաշային միւս բոլոր չքնաղաղիւտ կարողութիւններուն քով՝ ճաշակի և ընտրողութեան անստգիւտ առաւելութիւնները :

(*) Մանօթ. - Կը հաստատենք թէ՛ հայ ոսկերիչները իրենց այս գնահատելի ձեւնարկը կը պարտին Տ. Յակոբ Եպիսկոպոսի յղացման և անխնայ ջանքերուն, որ իր մէկ քանի ընկերներուն հետ՝ ինչպէս են Գ. Ճէզայիրեան, Մ. Ճիվանեան և այլն զորանոր ազգակրեղած է այս հրաշակերտը արտադրելու գործին մէջ :

ճաշակի և նրբութեան այսպիսի արտադրութիւններուն մէջ, միշտ պէտք է վնասուել մեր ամենուն ծանօթ և Համեստաշուք նկարչին, Տ. Երուանդ Տէմիրճեանի մատը, ինչպէս սովորութիւն եղած է Կառավարական շրջանակները երբեմն քրտնալտիօրէն զբաղեցնող կարգ մը ծանրակշիռ խնդիրներու մէջ վնասուել և կնոյ մատը...

Երկու մատերն ալ գեղարուեստական և զմայլելի...

Ուրեմն փութանք լսել անմիջապէս թէ՛ Պատմական Ոսկետախտակին ուրուագիծը պատրաստած է համակերպին Տիար Երուանդ Տէմիրճեան, իսկ անոր անբարբառ կենդանութիւնը տուած է նոյնքան ծանօթ փորագրիչ հայ եւ օտարազգի շրջանակներու մէջ, Տիար Երուանդ Գարագաշ :

Այս գործին իսկական գնահատուածը պիտի գտնենք Ն. Վ. Պօղոս փաշայի կողմէ ստորագրուած նամակի մը մէջ, որ ի ստորև հրատարակուած է :

Ոսկետախտակը՝ Մայիս 10 ին Ն. Վսեմութեան մատուցանելու համար, Հայ ոսկերչութիւնը իր կողմէ պատուիրակ կարգած է Տ. Տ. Յակոբ Եպիսկոպոս, Սմբատ Աւագեան Զարէհ Փափաղեան և Երուանդ Ճէ-

Ներքեան վաւարուն երիտասարդը . որ յանուն հայ ոսկերիչներու հետեւեալ ուղերթը արտասանած է .

ՀԱՅ ՈՍԿԵՐԻՉՆԵՐՈՒ ՈՒՂԵՐԹԸ

Վսեմաշուք Փաշա .

Հայկական դատին համար Ձեր վսեմութեան քաջարի ջանքերը , շուրջ երկու տարիէ ի վեր՝ երկրագնդի վրայ շնչող համայն հայութեան լանջքը առ Ձեզ սիրով եւ իր նսեպին բարեգործան ակնկալութեամբ լեցուցին . Այս քանի քանի անգամներ ըսուեցաւ Ձեզի լու ի լու կամ միջազգային մամուլին միջոցաւ .

Բայց կերեւայ թէ՛ մեծագործութիւններ կան՝ որոնց մասին գովեստները եւ շնորհակալութիւնները չեն կրնար սպառել :

Թո՛ղ տուէք ուրեմն՝ որ քաղաքիս Հայ Ոսկերիչներն ալ տիեզերական այս երախտապարտութեան եւ սքանչացման մէջ ընդուն իրենց բաժինը , եւ ընդունեցէք իրենց կողմէն այս դոյզն յիշատակը խորհրդանշան Ձեր պաշտելի գործունէութեան շարժառիթին եւ արդիւնքներուն . որ պիտի ծառայէ Ձեր վսեմութեան մտքին մէջ երբեմն երբեմն արթնցնելու մեր ամենախորին երախտագիտութեան եւ հիացման խորհուրդը :

Հաւատարի եղէք որ Մայր-Հայրենիքին Ձեզի ընծայած այդ պակը զարդարող փայլուն շիթերը ուրիշ բան չեն ներկայացներ՝ բայց միայն իր ամենապանծալի մէկ գաւակին հայրենասիրական ճիգերուն եւ աշխատութեանց ի տեսիլ՝ մեր եւ համորէն հայութեան թափած ուրախութեան արցունքները :

Աստուած Ձեր սրտին բաղձանքներուն լրում եւ Ձեզի խղաղ ու երջանիկ կեանք պարգեւէ :

ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅ ՈՍԿԵՐԻՉՆԵՐԸ

Ն. Վ. ՊՕՂՈՍ ՓԱՇԱՅԻ ՆԱՄԱԿԻՆ

ՊԱՏՃԷՆԸ

Գահիրէ 15 Մայիս 1914

Հայ Ոսկերիչներու Պատուական Խմբակցութիւն Աստ

Սիրելի Հայրենակիցներս .

Հ. Բ. Ը. Միութեան Ցրգ. տարեգարծին առթիւ կիրակի օր սարքուած դաշտանադէսին , պատու ըրիք ինձ հըրս պարակային ուղերթ մը ուղղելու եւ գեղարուստական Բլագ մը նուիրելու : Նոյն պահուն . ինձի ներկայացող պատուիրակութեան արգէն փութացի իմ յուզեալ երախտագիտութիւնս յայտնել՝ Ձեր ազնիւ զգացումն՝ իմուն համար :

Կեանքիս մէկ յիշատակելի օրը պիտի ըլլայ այդ օրը . զոր գուք շատ զեղեցիկ ընծայով մը յաւերժացուցիք արվէն . ինքզինքս հպարտ կ'զգամ մանաւանդ այդ շքեղ գործին մէջ տեսնելով Հայ տաղանդին վեհութիւնը : Յայտնի է թէ՛ հայ ոսկերիչները , միշտ եւ ամէն տեղ , աղղաբարկան գովելի ետանդ մը ցոյց տուած են եւ զուք՝ պատուելով զիս՝ կը պատուէք ազգը որուն մէկ զաւակն եմ եւ որուն բարօրութեան համար հաստատար աշխատած ըլլալով պարգապէս պարտականութիւնս կատարած եմ : Կը խնդրեմ որ անգամ մը եւս ընդունիք իմ շնորհապարտ զգացումներս եւ հաւատարի եղիք թէ՛ Ձեր գեղեցիկ եւ խորհրդաւոր յիշատակը աչքիս առջեւէն ընտել պիտի չի հեռացնեմ :

Խորին յարգանքով ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

ԼՈՒՐ ԹԷ ԼՈՒՐ . . .

Ի Ն Դ Ո Ւ Բ

Տասն քարիքը հասնիմ ի իջ մնաց . Հարիւր փուռ կերայ զարի , ցորեն հաց Անեմ օր . առտու , ցերեկ քե գիշեր , Եւս ասեմ ռասս մեկանց կը յիշեր . - Բարեկերպուցիմ օր ըլլայ եղեր , Յէրման կայ վերեւ . մեզ համար ճեղեր Երկունի կ'սխիւն , աճ ե քարեր տն . Որ շատնց հասաւ՝ Լան , Կարին , Սասուն .

Եկաւ ասեմը՝ կը շտեմ դարձեալ . «- Այ այսուհետեւ ընա՛ւ պոքս չե շալ . Մեր Պատրիարքին , Կ'հ . ըլլա՛յ ինչալ . Խօսեր է քացն մի մեծ Նախարար , Որ հաւատեալ կերած սե խաւար . Թուած էր միտքն ալ՝ եղած մեր խաւար . Թե՛ Հայու մը իր պիտի չ'արունի , Ըլլա՛յ ինչու Պոչիս . կամ մեզ Ձեքրուցի Մեկի եղբայնեմ եմ մեզ մեկ վարանի Որ առատեալ կարմիր Կարգակ Արիւնն է հոսած եւ քարեր քաղում Անոր ճարտարի . չե՛ս գիտեր Գուզում , Բարած եմ անվերջ . ու մեզ եմ քերեր ներկայիս զուարթ . . . երջանիկ օրեր . . .

Գնա՛՛ տե՛ր միտքէ , ցրու՛՛ շուս կոնդակ ժողովուրդիս որ , բոնուրեան վանդակ՝ Ա՛յ փշոռեցաւ , չ'մնաց օրթան . Վկայ վերն Աստուած , անվախ քո՛ղ երբան Իրենց հայրենիք , ուր մայր , զաւակ , կին Տարիներ զրկուած խեղճ կարօտագին Այգերեկն սեկած ճարտարներն ի վեր . Երկա՛ր կապանեք քե օր մը՝ տե՛ր մեր . . . Ձահմէթ պիտի ընե՛ք՝ քարիք մը ընել փրկելով մեզի՝ ճարտեմ այս անել :

Եւ Հայոց Պետր այս նախարարին . - Ե Ի՛նչ . քուած օձեր Ձե՛ն արդեօք խոցեր . . . Բոնութանցա Կ. Պ. Փիլիպոսով

ԱՆԱՆԵԱՆ ԵՂԲԱՐԻՔ

ՊԵՐՏԱԿ ԱԲԱՆՅ ԵՐ ԿԱՆԱՆՅ ԵԱՐԱ ԷՄԱՏ - ԷՏ - ՏԻՆ , ՍԱՆ ԺԱՉԷՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԴԻՄԱՑ

Մաքուր , արագ եւ երաշխաւորելի եմ մեր պատրաստած ԳՕՍԹԻՄ-ՆԵՐԸ առեմ անոնց համար , որոնք կողմն ճաշակաւոր հագուստներ ունենայ , Չախաւոր գ. Անոյ :

ՀԻՆ ՕՐԵՐՈՒ ՍԵՇԱՏԱԿ ՄԸ

Բաղուած Մ.Պոլիկիի պատմութեան

(Շարն . նախորդ թիւէն եւ վերջ)

Դեռ երկու քայլ չի հեռացած՝ անառքի տեսարան մը աւելի սրտածուլիկ հիւղճ ու անտէր մայր մը իր հոգեհատար զաւակին հետ միասին դուրս ելաւ փլատակներու մէջէն եւ հեծեց սկսաւ վազել մեզի միանալու համար . յայտնի էր որ վերահաս վտանգէ մը կոյզէր ազատել թէ՛ իր պատիւն ու կեանքը , եւ թէ՛ իր սիրտուն մանուկը : Դեռ քսան քայլ կար մեզի հասնելու . երբ յանկարծ երկու վագորդներ բռնեցին խեղճ կինը մէկը ակունջի օղը քաշեց , միւսը ձեռքին մանուկը . որ գանակի հարո անով մը երկու կտոր ընելով միասնող աւերակներու կրակին մէջ նետեց , կինը այս տեսնելով խելակորոյս ինկաւ գետին ու ալ չի շարժեցաւ . . . Ամէնքս ալ այդ յուզումնալից ու սրտաբեկ տեսարանին հանդիսատես եղանք վրէժխնդրութեան արիւնք ետաց ու վժվժաց ամէնքին ալ երակներուն մէջ , սակայն մեզմէ ոչ ոք համարձակեցաւ օգնութեան նշան մը տալ որովհետեւ թշնամիին անարդ սուրը կը շողար մեր գլխուն վերեւ ու մահ կ'սպառնար Ակամայ համբերեցինք այս բոլորին եւ զըխիկոր ու գանդաղ քայլերով հասանք վերջապէս ձեռքին զուրու ինքն եւ իր մարդիկը պատուհանը նստած գիշարի թնջուցի մը նման ներգաւոր ու սխալալ աչքերով կը նայէին խեղճ հայրուս վրայ : Անոնք վերէն վճիռներ կը տեղային ու մեզ շրջապատող կատարէի գանդերին անմիջապէս կը կատարէին անագորոյն պատգամներն . . . Ո՛հ , այդ սեւ օրը , վերջին գատատանի օրն էր . ուր մեղաւորները արդարներէն կը գատէին . . . Դահճապետները երբ տեսան թէ՛ ա՛լ աչքի զարնող մարդ չէր մնացած հրամայեցին որ մեզ կատարութեան զուրու տանին : Անգութները մեզի անթիւ ու անհամար նեղութիւններ տալէ վերջ ընեցին տարին որոշուած տեղը , որ մեր գտնուած տեղէն կէս ժամ հեռու էր . Կը յուսայի թէ՛ հոն հասնելով այլեւս պիտի ազատէի սրտաճմրկի տեսարանները զիտեղի , բայց չարապ կը սխալէի . հող ալ միւսնային էր , հող ալ անաւոր սպանդանոց մը . . .

Երբ մեզ ազատ արձակեցին արգէն իրեկնամուտ էր . ու հազիւ կը քանք արատարան մը գտնել հոն զիշերելու համար , արգէն մտոցեր էինք հաց ու շուրջ մտոցեր էինք քունի քաղցրութիւնը . . . Միւս օրը երբ գուրս ելալ տուէնք արհաւիրք իմ մէջս էր . եւ իմ շուրջս : Արեան մէջէն կը քալէի . հողը զեռ անով թաց էր , անձրեւով թրջած մարգագետնի մը պէս որ ստեքուող ալ կը ճըխտայ , աչքս կարմիր կը տեսնէր . . . Մահուան ամէն ծամածոթութիւնները , ցաւին ամէն գալարումները տանջանքին թուր զգայունները տեսայ : Չախախուած գանկերու ուղեղ շրջապէսներու , յճացած արիւններու , յոշոտուած անդամներու , պոթիկացող փորձաքններու անտարանը աչքերէս չէր հեռանար : Բաղաքը հիմա

աւերակ մըն էր պարզապէս . կիներ , աղքատներ , ծերունիներ ստուերներու պէս կը պտտէին , կը թափառէին աննպատակ , ա՛լ բանի մը չսպասող ա՛լ ամէն բանէ զրգուած էակներու խորին տրտմութեամբ առցուն :

Արարկի՛ր , ամբողջ մեծ մեռելատան մըն էր մահը լաւ տեսած էր իր գործը , քայքայուած կատարեալ էր : Անոնք որ տակաւին կանգուն ու ողջ էին , զըխիկոր , աչքերը շորցած , սրտերը ցամաքած մեծ փոսի մը մէջ կը լեցնէին իրենց սիրելիներու անճանաչ սրտաները . . . Սուրէն եւ հարէն վերջ տո՛վե ալ իր սուր ճիւղաներով յարձակեցաւ թշուառ հայրուս վրայ՝ ձմրան սառնամանիքին հետ Ո՛հ մեր քաշանդերը . . . Վերջապէս խեղճ ու կրակ կեանքով գարուն ելանք : Թնուութեան վերագարթումի ու կենդանութեան հետ տարօրինակ բան մը տեղի ունեցաւ . Հոն ուր մահը իր անճողպրի իր ու վերջնական թափը դրած կը կարծէի կեանքի խրատում մըն էր որ կը սկսէր սակաւ առ տակաւ . վախկոտ՝ բայց յամուտ Անգամ մը աչքերս բոլորս անկեցի : Իս որ այլեւս մշտնջենական անշարժութեան դատապարտուած կը համարէի Արարկի՛ր , տեսայ որ կենդանութիւնը դուրս կը վերցնէր ու շորս դին կը նայէր :

Ա՛յ ուրախութեան ասպած մնացի . . . Կոչկակարը իր խանութի մոխիրներուն ու փլատակներուն մէջէն հերուն մը գտած ու փողոցի մը անկիւնը նստած գործի սկսած էր խանութպանը՝ իր շաւակը մէկ երկու ծրար առած կը պտտէր արհեստաւորը նորէն ծալապատիկ նստած էր քեզիկանի մը անջուռ ու կ'աշխատէր , ուսուցիչը խուճ մը տղայ հաւաքած խաբիւռ տան մ'անկեւոր կը կարագնէր , վաճառակար կրպակ մը բազր ու մանր մոնր բաներ կը ծախէր , մանուսանիկ մանուսա կը պատրաստէր ձիւն , նիւար , ալ գահատելի անշուշտ . բայց ասիկա կեանք . էր որ ծայր կուտոր Ամէնքս ալ յամառօքէն կը դիմէին զէպի շարժում : զէպի ոգեւորութիւն . զէպի գործունէութիւն : Ամէնքս ալ զարթնումի ու վերածնութեան գիտովութեան կը բանուէին : Հայոց ազատարար ու մխիթարող շախախուցիչն յոռու էր , ինչպէս որ մարդ փրկութեան խորխոսին կը պլլուի վտանգի պահուն :

Ապրի՛լ կողեղին հայերը . ապրի՛լ ու պիտի ապրէին :

Հայը անդու անդադար աշխատեցաւ , աչքեցաւ , ճոճեցաւ ու մէկ երկու տարիէն դարձեալ կը քաւ իր աւերակ տանը սեղ ուրիշ մը կանգնեցնել . իր քրտնքով գնով վերստին գնեց իրեն թալլուած ու կողպտուած ինչքերը , ու քսուց անվատ միշտ զէպի առաջ , սուկաց ամէն աղէաքներու . կուրծք տըլաւ ամէն խոշոգոտներու : Այսօր վերստին մեզ թալլող ծոլ թուրքերն ու քրտնքերը մեր ձեռքը կը նային ու մեր զիբքին կը նախանձին : Ամօ՛թ աւագակ պորտաբոյններուն :

Արարկի՛ր Մ. Ա. Ս.

ՍԻՐԱՅԻՆ ԽՈՂՆԵՐ

Մ Ե Ն Ա Ի Ո Ր Ա Ս Տ Ղ Ի Կ Ը

Քաղաքէն դուրս, դաշտ ելած կը քալէինք կողք կողքի, երկու օտար սըրտեր էինք մենք իրարու անծանօթ...

Մոռցած էի ինքզինքս, մոռցած էի ամէն ինչ. նոյն իսկ հեռուեր երկնքի մը տակ ապրող ու ինձ համար բարախող զեղուն սիրտը...

Խորհրդաւոր ու նուիրակ պահը մօտեցած էր, ինքզինքս նոր կեանքի մը սէմին առջեւ կը գտնէի, անծանօթուհիս գլուխ սեղմած էր կրծքին կը ցցնէր երկնային փափուկ զոյգերը...

Սիրտս լեցուած էր, անցեալի անուշ յիշատակները շղթայուած կ'անցնէին արձամարձոտ ակնարկներ նստելով վրաս...

ՎԱՂԱՐՇ Ծիրառէլֆիա

ՅՕՐԹՕ ԷԿԼՕՆ

ՇԱՐԱ ՊԵՅԵ, ԷԼ ՆԵՂՏԵՅԵ Փալաքչիի վաճառատան գիմաց Քարթ Բօստալ Լուսանկաբնիւրուն տուգինան 10 զրուէն:

ԱՂԷՔՍԱՆԴՐՈՒՍԻՆԵՐՈՒՆ

Արշալոյսը Աղէքսանդրիոյ մէջ ձեռքէ կը ծախուի ճիար կարապետ Մըրըլեանին քով, որուն հասցէն է Պապը-Սիտրէ թիւ 22:

ՕՏԱՊՈՇԵԱՆ ԳՈՐԾԻ ՎՐԱՅ

Մեր յարգելի Ս. Օ. Ա. ու Ընթերցարանի փակուակն յետոյ խաղաղ կեանքը սկսած էր վերստին հանրային աղմուկից կեանքին մէջ կը մտնէ, այս անգամ ուրիշ ճանաչումով մը:

Մեր Ս. Օ. Ա. կերէի թիւ տոնացութեան մասնուէրէ կը վստիւնայ, եւ երբեմն իր գրուելը կ'անպիտան դուրս կը հանէ «Ես հոս եմ» քսելու համար: Տեսնեմք ի՞նչ տաքսիտըրիս ըստանձնած է այս անգամ մեր հասարակի դժուարահամար: Մ. Խ.

Ազնիւ Տիար,

Լա'ւ է անագան քան երբէք: Տօնական օրերու պահուն, ինչպէս եւ այլեւայլ պարագաներու տակ, տեղւոյս կաթոլիկ զգայուն եւ գիտակից երիտասարդութեան ինձի մասնաւորապէս հրաւէր եղած ըլլալով այս փոքրիկ հասարակութեան գէթ հայաբարձու տարրին քով յառաջդիմական շարժում մը առաջ բերելու նախաձեռնութիւնը ունենալ, անա այդ պաշտօնէն զոր անորժանարար կատարելու համարձակութիւնը կ'ունենամ այսօր ապա ինձ քոյր բարի կամեցողութիւններուն ու յուսով որ, գոնէ՛ հայաստանի գաղտնիքը իր բոլորանուէր աջակցութիւնը պիտի բերէ այս առաջին զեղեկոտ քայլերուն:

Եւ այս հաւատքով է, որ մեր հայաստանի զբաղմունքը կը հրաւիրուին ներկայ ըլլալ առաջին խորհրդակցական ժողովի մը, որ տեղի պիտի ունենայ առաջիկայ կիրակի օր, 17 Մայիս առաւօտեան ժամը 10 ին՝ առաջնորդարանին մեծ սրահին մէջ:

Ժողովին որոշումները պիտի հաղորդուին մեր բարեխնամ Առաջնորդ Արհ. Գուգեան Գերագալստային, մեր առաջին պահանջն ըլլալով, որ Ձայնաւոր Պատարագ կատարուի ամեն կիրակի առաւօտ (Որեմի ժողովին գումարումէն տաք իսկ որոշումներ կայացուցած են): Մ. Խ.)

Ասիկա, բնականաբար, սկզբնաւորութիւնն է ուրիշ քայլերու, ուրիշ պահանջներու, որոնց տիրանալու համար զոհողութիւն կուզուի մենք:

Կոչում կըրնեմ՝ ուրեմի՛ Ձեր կրօնասիրութեան եւ Ձեր յառաջդիմական զգացումներուն՝ խնդրելով որ փութաք ստիպողաբար ներկայ ըլլալ այս անդրանիկ ժողովին:

Երեւոյթ է թէ հայաստան տարրը անարդարանալի պատասխանատուութեան խոշոր բաժին մը ունի այս հասարակութեան անհրապոյր ու լծացած կեանքին մէջ, թէ՛ անցեալին եւ թէ՛ ներկային համար:

Դէպի յառաջ, ուրեմի: Ընդունեցէ՛ք, ազնիւ Տիար կղբայրակցական անձնուէր զգացմանց ջերմ հաւատին:

Ի դիմաց խումբ մը հայաստան երիտասարդներու

Ս. ՕՏԱՊՈՇԵԱՆ Դահլիճ, 1 Մայիս 1914

Մանօթ. կիրակի օրը մեր Ս. Օ. ին լեզուէն հասկնող 10-12 հայաստաններ եղած հրաւէրին պատասխանած են, եւ շարք մը վիճարանութիւններէ յետոյ, որոշուած է գումարումները շարունակել յառաջիկայ եւ ուրիշ կիրակիներ ալ: Յնձա՛ եւ ուրախ լե՛ր, երանելի Սեդրաք:

Ն Ս Մ Ա Կ Ա Ս Ո Ւ Փ

Ծիրառէլֆիա Փ. Ա. - Վ. - Աւշ ստացուեցաւ նամակդ, Դէպի Արշալոյսը ունեցած համակրութիւնդ՝ որուն անկեղծութեանը վստահեմք՝ հետեւելով նամակիդ պարունակութեան:

Ա Շ Խ Ա Տ Մ Ն Ո Ց

Ա՛ՌԻԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԸՆԹԱՑԻԿ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ

Ն ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Օրերայի Հրապարակիւն վրայ, Բրիտանաց Պատիւն դիմաց:

Փորագրութեան արուեստի բոլոր ճիւղերը մասնագիտօրէն կը կիրարկուին մեր աշխատանոցին մէջ կատարեալ ճշգրտութեամբ: Առեւտրական գրասենեակներու յատուկ աշխատանքները ինչպէս՝ Տարտոն, պիւստոքոն պղինձէ եւ քաւչուէ քիւմպրիք քօրթ քիւպրը եւ այլ որոնք մեր արագագորութեան տաք կը գտնուին դիւրամատչելի գներով: Impression en Relief

Տ Ե Ղ Ա Կ Ա Ե

Ն. Բ. Խոյիլը իր պալատական շքախումբին հետ այսօր Մահրուսա զբօսանաւով Տօլուս մեկնեցաւ, քննելու համար իր կալուածները: ՉԳՈՒՇՈՒԹԻՒՆ Թերթերը կը ծանուցանեն թէ ծաղկախող կը տարածուի եգիպտոսի մէջ և բաւական աւելներ կը գործէ:

Մոնղոլները պէտք է որ լաւ զգուշութիւններ ձեռք առնեն, իրենց զաւակները զերծ պահելու համար այս հիւանդութեան հաւանական վտանգներէն: ՆԱՄԱԿԱԳՐՈՇՄ Ոստիկանութիւնը այս պահուս մեծ փութաջանութեամբ կը փնտաւ այն գործարանը, որ մեծ քանակութեամբ թուրքական կեղծ նամակագրոյններ պատրաստած է եղեր:

ՔՐԷՏԻ ՅՈՆՍԻՅԷ ԷԺԻՐՈՒՆ

Table with 2 columns: Year (1886-1914) and Amount. Lists various financial records and interest rates.

Գ. ՍԷՌԻ

Table with 2 columns: Year (1827-1914) and Amount. Lists various financial records and interest rates.

ՀԵՌԱԳԻՐ

Լոնտոն 20 Մայիս. - Բրէնս Վիս ճիւղիկաւորով որ էստս Փաշա պետական հարուած մը կը պատրաստէ, եւ մանաւանդ իր անձին դէմ կը դառնայ, ձեռքաւորէ զայն իր կնոջը հետ: Ինչպէս եւ Աւստրիական Լաւարաւ ինձերը Տիւրացցօ մեկնեցան:

նը, լայն վարկ մը կը բանայ ձեզի համար թերթին սիւնակներուն մէջ: Ձեր յանձնարարած թերթը զրկուեցաւ իր հասցէին: Վճարումի պայմաններուն պիտի ծանօթանաք ձեզի շրջուած թերթերէն:

Եթէ զբաղումիդ թողաւաւ է, ջանացէ՛ք տեղւոյդ ներկայացուցչութիւնը ըստանձնել, կամ Ձեր պատասխանատուութեան ներքեւ վստահելի մէկուն յանձնել:

Վիէննա Պատ. Խմբ. Հանդիսի. - Ձեր ուղած թիւերը անկարելի եղաւ գտնել, վստիւնել այդ թիւերուն ճիշտութիւնը անգամ դոնել զարգիս նոյնքան անկարելի է իր կրած վեցամսեայ բանտարկութեան տաժանքէն խուսափելու համար Մոլիին ճամբանս ձեռք առած ըլլալուն պատճառաւ:

Ա Ձ Գ Ա Յ Ի Ե

ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԿՆԵԱՆ Երեսուն տարուան տարագրութեան մը յետոյ, ձերունի վէթերանը, Մկրտիչ Փորթուկալեան Պօլիս վերադարձած է:

Յօրեւեանական Կարգադիր Մասնախումբին հրաւէրով Պ Փորթուգալեան ներկայ եղած է 10 ամեայ յօրեւեանական հանդէսներուն, որ տեղի ունեցած է Մայիս 27 ի կիրակի օրը, ցերեկուան ժամը 2ին Փրթի-Շանի ձեռնային թատրոնին մէջ:

ՀԱՅ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Հայաց ազգագրական Ընկերութեան ապագայ թանգարանի շինութեան գործը իրականանալու վրայ է: Այս օրերս Թիֆլիսից Բագու գնալով Իննիկ վարդապետի և Երուանդ Լալանի ջանքերով, Բագուի գրամատէրերից շարս հոգի յանձն առեր են թանգարանի շինութեան համար տալ իւրաքանչիւրը հինգ հազարական ռուբլի, ուրեմն 20,000 ռուբլի, Թիֆլիսում ևս 3 հոգի յանձն են առեր տալ նոյնպէս 5000 ական ռուբլի, ուրեմն շինութեան համար պատրաստ կայ 35000 ռուբլի այսինքն 3500 ոսկի, կը գրէ Մշակութարձեալ Ռուսահայերն են որ գեղեցիկ և կարևոր ձեռնարկի մը սկզբնաւորութիւնը կըրնեն:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Պէնի Մէլարէն Մեծ. Սարգիս Էֆէնտի Մարգարեան մէկ տարեկան Արշալոյս տրամագրած է Կեսարիոյ վարժարաններէն մէկուն զրկուելու համար: Այդ թերթը թալաւի Արշալոյս վարժարանին յատկացուելով իր հասցէին զրկուեցաւ:

T I R I N G

Թ Ի Ր Ի Ն Ք

ԳՍՎԱԲԻ ՓՈՂՈՑ ԵՍԻԿԻՆ ՓԱՍԲԱԼ

Վ. Ա. ՃԱՆՈՒԱՑԱՆ ԿԻՑ

ԵՂԱՆՁԿԻՆ ԵՍՐԱՐԱՍԵՆ ՑԵՍԱԿ ԵՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՍՈՍ ԵՆ
ՓՈՒԹԱՑԵՔ ՕԳՏՈՒԼ

Կ. Պօլտոյ ամենամանօթ ԹԻՐԻՆԿ Ցան Գահիրէի
նորահաստատ Մասնաճիւղն է .

ԾՈՎԱՅԻՆ ԵՒ ԳԱՂԹԱՅԻՆ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Լ. ԵՆՈՎԻՔԻԱՆ ԵՒ ԸՆԿ.
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ (Եղիպտոս)

Շարաթական կանոնաւոր երթեւեկ .

Միացեալ Նահանգներու, Բա.
նաաայի եւ Հարաւային Ամերիկա-
յի համար .

Գաղթականներու համար չափա-
ւոր գին .

Աչքի քննութիւնը ճիշտաւ
կը կատարուի տեղւոյս մէջ .

Մանրահասն սեղեկութեանց
համար դիմել Գործակալութեան .

ՄՕՀԱՄԵՑ ԱԼԻ ՀՐԱՊԱՐԱԿ

Հետազոտական Հասցէ — ԼԵՆՕԲՈ

Փոսթարկի թիւ 897

Թուրքիոյ գաւառներու մէջ

փոխ - գործակալներ կը փնտրուին

ՎԻՃԱԿԱՎԱՆՈՒԹԻՒՆ

ԱՂԲԱՏԱՆՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԳԱՀԻՐԵՒ ՀԱՅՈՑ

289 դ թիւով .

Գահիրէ, 17 Մայիս 1914

Առաջին պարզիւ

Թիւ	15187	Ղրջ .	Ողջ	4000
"	518	"	"	400
"	8455	"	"	200
"	15244	"	"	100
"	8756	"	"	"
"	6691	"	"	"
"	9231	"	"	"
"	1567	"	"	"
"	4292	"	"	"

Հետեւեալ 40 թիւերը կը շահին 70ա-
կան դրուշ :

4	15	28	2134	2294	2586	2824
3765	3983	4215	4359	4732	5153	
5193	5535	6721	7362	7943	8016	
9374	9460	9585	10451	10627	10938	
12055	12327	12414	12782	12890		
13515	13814	14013	14333	14339		
14672	15163	15502	15623	15998		


ՓՈՐԱԳՐԻՉ

Ա. ՍԻՆԷՄԵԱՆ

ԶԻՆԳՕԿՐԱՔ

Մուհամմէտ Ալի Փողոցին վրայ
ՇԱՐՃ ԹՕՐԿՈՒՄԱՆ

THE SINGER MANUFACTURING Co



Շարա-էլ-Մզրապի Տափիզ Պրայնի սեփականութեանը մէջ .

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԸՐԻՆԵՐՆ ԵՆ Եւ ասոնցմէ
մինչեւ ցարդ 22,000,000 ծախուած է :


400 Կ աւելի վիսյական եւ մեքայներով վարձատրուած, Երաշխատեալ մեքենաներ .

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահասակախմ մէջ ստացած է .
ՀԱՅՐԱՅԻՉ ԹՈՒՐԿԻՈՑ ՀԱՅՐԱՅԻՉ ԱՆԳՂԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ
ԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵՍՑ
ՀԱՅՐԱՅԻՉ Ն . Բ . ԽՏԵՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ ,
ուշադրութիւն դարձնել
իւրաքանչիւր 'եքենայի
վրայ ՍԻՆԿԸՐԻ ներկայ
յառկանը չիմ



Գիւն ՉԱՓԼ

ԱՇԽԱՐՀԻ ՊՈՂՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱՃԻՒՂՆԵՐ ՈՒՆԻ

Չրի դասեր և նորոգու-
թիւններ , յաճախորդաց
սուշներուն մէջ .

Վարձանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիներու
նորոգութիւն ամեն կարգի
Մեքենայից

ՀԱՇՎԱՐԱՆ ՎԱՄՊՈՒՐԱԿԱՆ

ՊԱՋԱՐ ՄԻՐՈՒՐ ԹԻՒ 19

ԱՒԵՏԻՄ ՊՕԳԱՃԵԱՆ

Մեր ճաշարանին մէջ կը պատ-
րաստուին Եւրոպական եւ Արեւել-
եան ընտիր կերակուրներ . պան-
դաւառ երիտասարդները եթէ ան-
գամ մը այցելեն մեծապէս գոհ
պիտի մնան մատչելի գիներէն և
սպասակութենէն . 14

Գ Ո Ր Ի Ր Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ի Ն

« Արշալոյս » ի ամբողջ Ռուսա-
նիոյ գործակալութիւնը ստանձնած
է Տիար Կ. Փիլիպպոսեան , որուն
պէտք է զիմել թերթին վերաբեր-
եալ ամէն գործերու համար .
Մեր գործակալին հասցէն է ,

Mr. G. B. Pilibossian
F. American
83 St. Mangalia
(Roumanie) Constantza

Նոյնպէս Արաբիկի գործակալն
է Տիար Միսաք Ա. Սուրեան , որ-
րուն պէտք է զիմել թերթին վե-
րաբերեալ բոլոր գործերու համար .

ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԴԵՐՁԱԿ ՎԱՃԱՌԱԿԱՆ

Փոխադրուած է Երաւ Ապտ Էլ Ալիշ
Ապտինի Գարագոյին մօտ .

Անոնք որ ճաշակաւոր գոսթիւն մ.
ւնենալու համար զանազան տեղեր զի-
մած ու զժգոհ մնացած են , թող ան-
շամ մը մեր վաճառատունը այցելեն .
պատրաստ եմ իրենց հետ պայմանաւոր .
ու ի յոր՝ եթէ իրենց յանձնարարութիւնը
նը գոհացուցիչ չ'գտնեն , կանխաձեռն
ամբողջովին ետ պիտի ստանան .

Այս պայմանը՝ ճաշակաւոր հազ-
ուելու փափարոզներուն համար , նը-
պատասաւոր ատիթ մը պիտի ըլլայ .
Ապտիկ ազգայինքները նկատու-
ղութեան շնն առնուի , եւ անոնք որ
ինծի կը դիմեն , դիւրաւ կրնան ըմբո-
նել ապտիկին տարբերութիւնները ,
թէ գործի մաքրութեան եւ թէ գի-
նեւորու մասին . 1-50

ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԻՐԱՆՈՒՑՈՒՄ

Սղէքսանդրիոյ և Գաւառներու
համար գործակալներու պէտքը
կայ . փափարոզները կրնան զիմել
« Արշալոյս » ի խմբագրութեան հաս-
ցէին .

Արտոնագրի ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

Սեփական Տպարան ԱՐՇԱԼՈՅՈ Մազրոյ

GRAND BAR ABBAS

ՇԱՐՄ. ՊԱՊ ԷԼ ՊԱՀՐԻ ՆՍԻԿԻՆ ՁԼԱՇԻՆ ՏԵՂ
ՍԵՓԱԿԱՆԱՏԷՐԻՔ՝ Ս . ԲԱԼԱՄՈՒՏԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԻՔ

Անցեալ Մայիս 1 ին սեղի ունեցաւ քացուք Կոստ Պառ Ապպասի , որ կոչուած է զոչալ ընտանեկան հաստատութիւնը , ճոխ եւ ամենամալոյն
պայաններով կահաւորուած .

ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԽՆԱՄԵԱԼ . ԱՐԱԳ ԵՒ ԿԱՆՈՆԱՒՈՐ .

Կը հրաւիրուին հայ ընտանեքները , յետ այսու իրենց ժամադրաւորը ընտրել Կոստ Պառ Ապպասը . վստահ ըլլալով թէ՛ գոհ պիտի մնան իրենց ընծայն-
լի նախապատուութենէն .

Կոստ Պառ Ապպասը մասնաւոր խնամքով ընտրած է իր բոլոր ըմպելիները՝ և գարեջուրներուն ամէն լաւագոյն տեսակներուն հետ , առաջնութիւն
պիտի տրուի « ԼՕՎԷՆ ՊՐԱՈՒՆ » տեսակին՝ որ ճաշակաւորներուն քով մեծ ընդունելութիւն գտած և համբաւեալ է .

Մ'ն ուրեմն . Փութացէ՛ք Դէպի Կոստ Պառ Ապպաս .

Ս . ԲԱԼԱՄՈՒՏԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԻՔ